ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 89-Ա

ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԱԾ ԳՈՒՅՔԻ ՀԵՏԱԳԱ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածը՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Միավորված Ազգերի Կազմակերպության Զարգացման ծրագրի «Կանայք և երիտասարդները նորարար տեղական զարգացման գործընթացներում» բաղադրիչի շրջանակներում Արենի համայնքին նվիրաբերված PAZ 320405-04 տիպի ավտոբուսը 3 տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Աղավնաձորի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ին՝ շարժական արտադպրոցական կրթական ծառայություն մատուցելու նպատակով:

2. «Աղավնաձորի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ին՝ ներդնել շարժական արտադպրոցական կրթություն մատուցելու համակարգ՝ կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց հետո:

2.1 «Աղավնաձորի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ին՝ Արենի համայնքի առաջիկա նիստին ներկայացնել կանոնադրության փոփոխության մասին առաջարկ:

3. Սույն որոշման հավելված 1-ում նշված գույքը 3 տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով հատկացնել «Աղավնաձորի արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ին:

4. Հաստատել սույն որոշման հավելված 1-ում նշված գույքի վարձակալության տրամադրման պայմանագրի ձևը՝ ըստ սույն որոշման հավելված 2-ի:

5. Հաստատել սույն որոշման հավելված 1-ում նշված գույքի վարձակալությամբ տրամադրման սակագները՝ ըստ սույն որոշման հավելված 3-ի:

6. Սահմանել շարժական արտադպրոցական ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների ցանկը և վարձավճարը՝ ըստ սույն որոշման հավելված 4-ի:

6.1 Կիրառել արտոնություն, եթե միևնույն սանը գրանցվում է միևնույն ժամանակ երկու դասերին՝ վարձավճարը սահմանել ընդհանուր 5000 ՀՀ դրամ

7. Սահմանել սույն որոշման 1 կետում նշված ավտոբուսի երթուղին՝ շաբաթական կտրվածքով երեք անգամ՝ ըստ սույն որոշման հավելված 5-ի:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ՄՀԵՐ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽԱՉԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՉԵ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՂԱՋԱՐՅԱՆ ԳՐԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԵԿՏԱՐ

ՍԱՀԱԿՅԱՆ ՀՈՒՍԻԿ

ՍԱՄՎԵԼՅԱՆ ՍԵՎԱԿ

ՍՄԲԱՏՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ